է իշխան Բիսմարկի հետ և նրան բոլորը պատմել է։ Բարօնը հաղորդեց ինձ, որ ես ճիշդ եմ հասկացել իշխանի ասածների նպատակը և որ ես կարող եմ բանակցութիւններ սկսել այդ տեսութեան վերաբերութեամբ, որ պէտք է կատարվէր Կիսսինգենի մէջ։ „Բայց դուք ի հարկէ հասկանում էք, աւելացրեց նա, որ այդ տեսակցութիւնը կարող է նշանաւոր հետևանքներ ունենալ, ուրեմն պէտք է մեծ զգուշութեամբ գործել։ Բիսմարկ համոզված է, որ շուտով Ֆրանսիայի մէջ իշխանութիւնը Գամբետտայի ձեռքը կանցնի և այդ իշխանութիւնը վճռողական բնաւորութիւն կունենայ։ Բիսմարկ խաղաղութիւն է ցանկանում և կամենում է մօտ ծանօթ լինել այն մարդու հետ, որից շուտով կախումն կունենան պատերազմը և խաղաղութիւնը։ Բիսմարկ կամենում է անձամբ իմանալ Գամբետտայի գաղտնի մտքերը դրա մասին։ Պէտք է մօտեցնել այդ երկու պետական գործիչներին և հարկաւոր է, որ նրանք միմեանց չը հանդիպեն իբրև թշնամիներ։ Անցեալը թող այնպէս էլ մնայ, այժմ պէտք է մտածել ապագայի մասին և անհրաժեշտ է բոլոր այն անյարմարութիւնների առաջն առնել, որոնք կարող են ծնել այդ տեսակցութեան նշանակութիւնը, որի ժամանակ չը պէտք է խօսվի զանազան համաձայնութիւնների և այժմեան դաշնագիրների փոփոխութեան մասին։ Անհրաժեշտ է լաւ իմանալ, որ ոչ կանցլերը, ոչ գերմանական կայսրը և ժողովուրդը չեն թոյլ տայ մինչև անգամ տեսական դատողութիւններ կատարված այն անցքերի մասին, որոնց պատճառով Ֆրանսիան ծածկվեցաւ գերմանական զինուորների դիակներով։ Այնու ամենայնիւ այդ երկու երևելի մարդկերանց տեսակցութիւնը կարող է հազիւ օգուտներ տալ խաղաղութեանը։ Ես վճռեցի այս բոլոր խօսակցութիւնը բառ առ բառ պատմել Գամբետտային։ Բայց առաջին տեսակցութեան ժամանակ մենք խօսում էինք Բերլինի կոնգրեսի մասին։ Վադդինգտոն դեռ չէր վերադարձել Բերլինից և ես առաջինն էի, որ կարող էի տեղեկութիւններ հաղորդել կոնգրեսի մասին։ Իմ խօսակցութիւնը Բիսմարկի հետ ես կարողացայ մի շաբաթից յետոյ միայն Գամբետտային հաղորդել։ Իշխան Բիսմարկի լաւ կարծիքը Գամբետտայի մասին նրան շողոքորդեց, բայց այդ բանը չարգելից նրան գնահատել տեսակցութեան նշանակութիւնը։ Ես ամենից առաջ հարցրի, ի՞նչպէս անել, որ տեսակցութիւնը գաղտնի լինի։ „Հաւատացած եղէք, ասաց նա, որ ես կարող եմ ծածկել իմ հետքերը, եթէ այդ կամենում եմ։“ Նորերումս ես այդ խօսքերը մտաբերեցի, երբ Ֆրանսիական մինիստրներից մէկը նկատեց ինձ „ի՞նչ եղաւ Գամբետտա։ Մենք նրա հետքը կորցրինք։“ Իմ խօսակցութիւնը Գամբետտայի հետ բաւական երկար տևեց։ Միւս օրը ես տեսնվեցայ իշխան Հօհենլոէի հետ և յայտնեցի նրան, որ Գամբետտա համաձայն է գաղտնի տեսնվել Բիսմարկի հետ։ Բիսմարկ դեռ էլի երկու շաբաթ պէտք է մնար Կիսսինգենի մէջ և Հօհենլոէ խնդրեց ինձ այցելել նրան երկու օրից յետոյ բանակցութիւնների հետևանքները իմանալու համար։ Տեսնելով, որ տեսակցութիւնը կարող է շուտով կայանալ և որ մի աննշան խօսք անգամ որ և է կողմից կարող է նշանաւոր հետևանքներ ունենալ, ես վախեցայ այն պատասխանատուութիւնից, որ ինձ վրա էի առել։ Ես վճռեցի հրաժարվել այդ գործին մասնակցելուց, ներողութիւն խնդրեցի իշխան Հօհենլոէից, չը գնացի այլևս Գամբետտայի մօտ, իսկ իշխան Բիսմարկ այդ ժամանակ հեռացաւ Կիսսինգենից։ Վերջին ժամանակներում տարածված լուրերը Բիսմարկի և Գամբետտայի տեսութեան մասին ինձ այն եզրակացութեան հասցրին, թէ գործը այնպիսի մարդու ձեռք է անցել, որ չէ վախեցել այդ մեծ պատասխանատուութիւնից։“

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզի լրագիրները հաղորդում են նոր մանրամասնութիւններ Գրէվիի և Գամբետտայի մէջ կայացած վերջին բանակցութիւնների մասին։ Տեսակցութիւնը, ինչպէս ասում են, շատ սրտառուչ էր։ Խօսակցութեան առարկայ էր նոյնպէս արտաքին քաղաքականութեան վերաբերեալ հարցեր։ Գամբէտտան Գերմանիայի մասին խօսելով ասեց, որ նա «գլխից մինչև ոտը զինաւորված է», և յետոյ Ռուսաստանի մասին շատ լաւ խօսեց, ինչպէս հաւատացնում է «Köln. Stg.» լրագիրը։ Ներքին գործերի դրութեան վերաբերութեամբ, Գրէվիի և Գամբէտտայի մէջ համաձայնութիւն կայացաւ։ Փարիզում սպասում են լորդ Գրէնվիլի գալուն, որը, իբր թէ աշխատում է նախապատրաստել անգլո-ֆրանսիական դաշնակցութեան կապերը, որպէս հակակշիռ երեք կայսրների դաշնակցութեան։ Այդ նախագծի մասին վաղուց է որ խօսում են, բայց նրա կայանալը շատ կասկածելի է համարվում։ Այդ բանի համար մեծ յոյսեր են դնում Գամբէտտայի ապագայ մինիստրութեան վրա, մանաւանդ, որ վերջինս դիտաւորութիւն ունի անձամբ ղեկավարել Ֆրանսիայի արտաքին քաղաքականութիւնը։

—«Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, որ Զէրնօգորիայի իշխան Նիկոլայ ճանապարհ է ընկնում Ռուսաստան իր որդու, թագաժառանգ իշխան Դանիէլի հետ, նրան տեղաւորելու համար Պետերբուրգի պետական ուսումնարաններից մէկի մէջ։ Իշխանը դիտաւորութիւն ունի մի քանի օր Վիէննա մնալ Ֆրանց-Յովսէփ կայսրի հետ տեսակցելու համար։ Վիէննա արդէն հասաւ իշխանի ադիւտանտներից մէկը, Նիկո Մատանովիչ, որը կը սպասի նրան այնտեղ, և յետոյ կուղեկցի դէպի Ռուսաստան։ Մատանովիչ Զէրնօգորիայի դեսպան է նշանակված Պետերբուրգում և թագաժառանգ Դանիէլի դաստիարակ։

—Լիմէրիկից, հոկտեմբերի 6-ից, հեռագրում են հետևեալը։ Երէկ երեկոյեան, երբ պոլիցիականները հողային լիգայի տեղական բաժնի գանձապահին բանտ էին տանում, անկարգութիւնները նորոգվեցան։ Հաւաքված ամբոխը անդադար քարեր էր գցում մինչև անգամ այն ժամանակ, երբ կալանաւորվածը արդէն բանտումն էր նստեցրած։ Պոլիցիականները, վերջապէս, ստիպված էին հրացաններ արձակել։ Վիրաւորվածների մէջ գտնվում է և մէկ երիտասարդ տիկին։ Որովհետև անկարգութիւնները դեռ ևս շարունակվում են, այդ պատճառով քաղաքային իշխանութիւնները հնարագրով պահանջեցին պոլիցիայի կազմակերպութիւնը զօրեղացնել։

—Լօնդօնից հեռագրում են լրագիրներին, հոկտեմբերի 6-ին, որ երեք գնդեր հրաման ստացան մտնել Իրլանդիա։ Լորդ-կանցլեր կարգադրեց՝ Պարնէլին հրաժարեցնել Ուիկլօեան կոմսութեան հաշտարար դատաւորների թեկնածուից։ Այլ տեղեկութիւնների համեմատ Դուբլինում երէկ նոր անկարգութիւններ պատահեցան։ Ամբոխը մի քանի անչաղ լրագիրների խմբագրութիւնների պատուհանները կոտրեց, և քարերի գցելով սարսափեցրեց պոլիցիային հեռանալ։ Կէս գիշերից յետոյ զինուորական ուժեր պահանջվեցան։

—Լօնդօնից հաղորդում են լրագիրներին հետևեալը։ Լուր կայ, որ Դուբլինում փորձել են սպանել Հերբերտ Գլադստօնին, առաջին մինիստրի որդուն, որը նորերումս Ֆօրստերի օգնական նշանակվեցաւ Իրլանդիան կառավարելու համար։ Ներքին գործերի մինիստր, սրը Վերնօն Հարկուրթ մէկ սպառնալից նամակ ստացաւ Պարնէլի կալանաւորութեան պատճառով։ Մէկ լրագրի խմբագիրից տեսակցութիւն ունէր Պարնէլի հետ բանտում։ Այդ տեսակցութեան ժամանակ Պարնէլ յայտնեց այն համոզմունքը, որ իր բանտարկութիւնը չի վնասի իրլանդական գործին, և որ ժողովուրդը մինչև վերջը կը կատարի իր պարտաւորութիւնը։ Ինքն չէ կարծում, որ կառավարութիւնը վճռել է ջնջել հողային լիգան։ Իրլանդական ֆէրմերների մեծամասնութիւնը վճռեց վարձական վճարը չը տալ հողատէրերին մինչև որ Պարնէլ ազատված չը լինի։

—Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են։ Ինչպէս յայտնի է, պետութիւնների ներկայացուցիչները առաջարկեցին Բ. Դրան մասնաւոր յանձնաժողով նշանակել Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու համար։ Բ. Դուռը համաձայնվեց այդ առաջարկութեան հետ, պատրաստականութիւն յայտնելով, ըստ չափու կարողութեան բաւականացնել բոլոր պետութիւնների պահանջները։ Արդէն մի քանի օր առաջ, լրագիրները հաղորդում էին, որ Մուխտար-փաշան է նշանակված Բ. Դրան գլխաւոր կոմիսար Հայաստանում։

—Հռոմի լրագիրները հաղորդում են, որ պապը սուրբ Պետրոսի ազօթարաններից մէկում ընդունեց Հռոմում հաւաքված ուխտաւորներին։ Պապը տեսնվեցաւ նրանց հետ կարդինալներով շրջապատված լինելով։ Նա ճառ խօսեց, որի մէջ յայտնեց, որ ուրախ է տեսնելով իրան իտալացիների մէջ և զգնելով նրանց մէջ մխիթարութիւն։ Նա ապրում է թշնամիների մէջ։ անբարոյական մամուլը աշխատում է նրա վարկը վայր գցել և թուլացնել նրա իշխանութիւնը, սպառնալով մինչև անգամ Վատիկանը գրաւել և պապին բանտարկել կամ աքսորել։ Վերջացնելով իր խօսքերը, պապը հաւատացեալներին կոչ հրաւիրեց։ «Մենք հոգևոր զէնքով կը պատերազմենք և կը յաղթենք, ասաց նա։ Օրհնում եմ ձեզ և իմ հայրենիքը—Իտալիան։» Քաղաքը այդ օրը բոլորովին հանգիստ էր։ Ուխտաւորների ընդունելութիւնը, որոնց թիւը երեք հազարից աւելի էր, շարունակվում էր մինչև կէսօրվայ երկու ժամը։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացիների գաղթականութիւնը Հին-Աշխարհում այս տարի ահագին չափերի հասաւ։ Մօտ 100,000 ամերիկացիներ թողին իրանց հայրենիքը, և որ նշանաւորն է, բոլորը Եւրոպա հասան մեծ փողերով։ Ամերիկական բիրժայի դիրեկտորը, Լօնդօնում, հաշուեց, որ կլոր հաշուով իւրաքանչիւր գաղթական իր հետ բերեց 4000-ից մինչև 5000 ֆունտ ստերլինգ, իսկ ընդհանուր թիւով այդ կը կազմի 500 միլիոն դոլլար գումար։ Ֆինանսիստները հաւատացնում են, որ չը նայելով երկրի հարստութեանը այդպիսի գումարների կորչելը կարող է նկատելի կերպով ազդել Ամերիկայի տնտեսական դրութեան վրա։

***

Փարիզի լրագիրները հաստատում են, որ, իբր թէ, նախկին կայսրուհի Եւգենիա, իր վերջին անգամ Փարիզով անցկենալու ժամանակ, կտակ թողեց այնտեղի մի նոտարիուսի մօտ, որով նա իր ժառանգ է նշանակում իշխան Ժերոմի մեծ որդուն, իշխան Վիկտոր Նապոլէոնին։ Մատնացոյց դուն, իշխան Վիկտոր Նապոլէոնին։ Մատնացոյց անելով նրան, որպէս ցեղի գլխաւորի վրա, նա կտակեց նրան իր թողած բոլոր կարողութիւնը գործածել բոնապարտեանների գործը պաշտպանելու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 50 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 216 ր., երկրորդ 212 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 62 կ., երկրորդ 89 ր. 62 կ., երրորդ 89 ր. 75 կ., ոսկի 7 ր. 66 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդոնի վրա արժէ 25,87 պէնս, Ամստերդամի վրա 130,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 221 մարկ, Փարիզի վրա արժէ 273 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

—

(Հրապարակական դասախօսութիւնք Ա. Երիցեանի)։

Լեզուների ծագման և զարգացման օրէնքները։—Թէ այժմ ինչ դրութեան մէջ է հայոց լեզուի ծագման խնդիրը։—Գրաբառ լեզուի սկզբնական ձևերը վերականգնացնելու մի փորձ և այս միջոցաւ ազգիս նախնական կենաց նկարագրութիւնը։—Բանաստեղծական այլաբանութիւն և առասպելաց ծագումն։—Առասպելաբանութեան զարգացումն բանաստեղծութեան մէջ և հին հայոց դիցազնական վիպասանութիւնը։—Պ. Լիմնի վերջին հետազօտութիւնները և Մովսէս Խորենացւոյ պատմութեան աղբիւրների մասին։—Գիրը և սրա ծագման մասին ընդհանրապէս։—Նախնի հայոց սկզբնական գիրը։—Թէ այժմ ինչ դրութեան մէջ է Հայաստանում գտնուած բեռագրերի ընթերցանութիւնը։—Թէ որ աստիճանի է եղած Տուրանական, Սեմիական և Արիական ազգերի ազդեցութիւնը հեթանոսական հայերի կենաց վրա։—Հայոց հեթանոսական կեանքից մնացած գրաւոր յիշատակները։—Հայաստանի քաղաքական և բարոյական դրութիւնը IV դարում։—Քրիստոնէութեան ծաւալումն և սասրական-բիւզանդական ազդեցութիւնը հայոց գրականութեան վրա IV և V դարերում։—Հայոց այբուբենի ծագման խնդիրը և Ս. Մեսրոպայ տուած կատարելագործութիւնը։—Ս. Մեսրոպայ առաջին և երկրորդ աշակերտները արևմտեան փիլիսոփայական ուսմանց ազդեցութեան ներքոյ։—Սուրբ Գրքի թարգմանութիւնը և նրա գեղահատութիւնը ներկայումս։—Ոսկէ դարի գրաբառը և նրա ժամանակակից աշխարհաբառի հետքերը։—Հայոց գրականութիւնը սկսում է ընկնիլ VI դարում։—Հերետիկոսութեանց հետ մաքառիլը և հայոց կրօնական և աստուածաբանական մատենագրութիւնը V դարից մինչև X դարը։—Հայաստանի կրթութեան աստիճանը այդ միջոցում։—Արաբական լուսաւորութիւնը։—Զգաումն դէպի եկեղեցեաց միաւորութիւնը XI դարից մինչև XIV դարը։—Բիւզանդիոյ և Հռոմայ կաթոլիկութեան ազդեցութիւնը։—Խաչակրաց պատերազմների նշանակութիւնը հայոց պատմութեան համար։—Տրամաբանութեան մուտքը կրօնքի մէջ (բացիօնալիզմ)։—Հայոց գրականութեան արծաթէ դարը։—Գրաբառի վերջնական անկումն և ժողովրդական բարբառների հետագայ զարգացումն։—Հայոց գաղթականութիւնը և սորա հետևանքները լեզուի և գրականութեան համար։—Հայոց տպագրութեան սկզբնաւորութիւնը և գրաբառի վերականգնացնելու ջանքերը։—Վենետիկի Մխիթարեանց և այլոց ծառայութիւնները։—Նոր գրականեան լեզու ներկայ հայոց ի Ռուսիայ և ի Տաճկաստան։—Լեզուի և գրականեան ուղղութեան մէջ գտնուած կական տարբերութիւնները Ռուսահայոց և Տաճկահայոց։—Հայոց գրականութեան ներկայ դրութիւնը՝ վիպասանութիւնը ընդհանրապէս և ժողովրդական բանաստեղծութիւնը, գիտական և ուսումնական գրականութիւնը։—Հայոց տպագրութեան վիճակագրութիւնը։—Հայոց պարբերական տպագրութիւնը, նորա պատմական տեսութիւնը և ներկայ դրութիւնը։

Վերջաբան։

—

Դասախօսութիւնները կը լինին Պ. Արծրունու թատրօնական դահլիճում հոկտեմբերի 21, 23, 28 և 30-ին։ Սկիզբը ժամի 7½ երեկոյեան։

—

Չորս դասախօսութեանց տոմսակները միասին և առանձին առանձին՝ կարելի է ստանալ պ. Ծատուրեանի խանութում և թատրօնի կասսայում։ Տոմսակների գներն են 1 բուբլիից սկսած մինչև 15 կոպէկ։

ԼՈՒՍ ՏԵՍԱԻ երեխայական ԼՕՏՕԹԻՖԼԻՍՈՒ բէսալական ուսումնարանի հայ-աշակերտների հրատարակութեամբ։ Վաճառվում է (յօգուտ նոյն դպրոցի աշակերտաց ապագայ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ) ԿՈՎԿԱՍԵԱՆ, ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ գրավաճառանոցներում և կուկիայի կամրջի վրա պ. Մատինեանցի խանութում։ Գինն է 50 կոպ։ 6—6